

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆԻԹԻԻՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆԻՍՏԸ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1880



Կ. ՊՕԼԻՍ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆՆԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ՓՈՂՈՅ

ԴԻԻԱՆՔ ԱԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՂՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Սերվիլէն էֆէնտի	Ա. Արեւապետ
Յ. Մէրեմէ-Գուլի էֆէնտի	Բ. »
Միքայէլ էֆէնտի Մամիկոնեան	Գ. »
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան	Ա. Արեւապետ
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան	Բ. »
Միհրան էֆէնտի Զօպանեան	Գ. »

Զեռնաստրեան դիւան

Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան
Հովհաննէս Քահանայ Մկրեան
Պապի էֆէնտի Պապօեան

Դաստիարակութեան դիւան

Յարութիւն էֆէնտի Թիւլեան
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Տօքթօռ Ռափաէլեան էֆէնտի

Կարաւաճոց դիւան

Աւետիս էֆէնտի Կիրտաղեան
Բարսեղ էֆէնտի Հալաճեան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան

Համարակալութեան դիւան

Յակոբ էֆէնտի Սըշակ
Պօղոս էֆէնտի Թորգոմեան

Յարաբերութեան դիւան

Դարեղ ին էֆէնտի Մէլիքեան
Միհրան էֆէնտի Զօպանեան
Նշան էֆէնտի Օտեան

Իրաւաստրեան դիւան

Տ. Ներսէս վարդապետ Աղանեան
Տեւեմար էֆէնտի Էքսէրճեան
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան

Նախամեռնութեան դիւան

Տիգրան էֆէնտի Եռասուֆեան
Ղազար էֆէնտի Հովուեան

Խմբագրութեան դիւան

Կողապետ էֆ. Խիթիւճեան
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան
Արրաճամ էֆէնտի Մարտառեան

ԱԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՂՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԵՆ

Ն Ի Ս Տ Ը

26 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1880

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Սիմէոն Եպիսկոպոս Սէֆէրեան (Առժամեայ կարգեալ)
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եռասուֆեան (» »)

ԱԶԴԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ

Ա. Վիճակ

4 Կարապետ Եպս. Սերոբեան
2 Սիմոն Եպս. Սէֆէրեան
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ Պ
4 Կարապետ Ք. Սէթեան

Բ. Վիճակ

5 Մատթէոս Եպս. Իզմիրլեան
6 Պօղոս Վ. Խօլտամեան Բ 2
7 Յովհաննէս Ք. Մկրեան
8 Գրիգոր » Աճէմեան Բ

Գ. Վիճակ

9 Յակոբ » Ա. Փափաղեան Բ 3
10 Ահալ Ք. Տ. Սարգսեան Բ Պ
11 Խորէն » Փէշկիւճեան Բ
12

Դ. Վիճակ

13 Ներսէս Վ. Ասլանեան Բ 8
14 Սուքիաս Ք. Ստեփանեան Բ 6
15 Վրթանէս » Պալեան Բ 8
16

Ե. Վիճակ

17 Խորէն Արքե. Նար Պէյ Բ Պ
18 Յովհաննէս Վ. Փափաղեան
19 Գարեգին » Թաթարեան Բ 3
20

Բ Բացակայութիւն առաջին :
Բ.2 Բացակայութիւն երկրորդ :
Բ.Պ Բացկ. բանաւոր պատճառաւ :

ԱՅԻՄԱՆԱԿԱՆ

(Ա. Վիճակ)

Գումգաբու, Կեօիկ փաշա
Եւ Գումգաբուի դուքս

24 Գրիգոր Պէրպէրեան Բ 8
22 Գէորգ Ստիմարաճեան Բ
23 Խաչիկ Մանկասարեան Բ 8
24 Կարապետ Աղարդաճեան
25 Համբարձում Մազպուլեան Բ 2
26 Մինաս Գափամաճեան

27 Ն. Մէղպուրեան Տօքթօր Բ
28 Սարգիս Աղարէկեան Բ Պ
29 Սահակ Ապրօ Բ Պ
30 Սենեքերիմ Մանուկեան Բ 7
31 Բարթոլոմէ Բիւրքճիպաշեան

32 Ատովմ Տէրոյէնց Բ 8
33 Գէորգ Աստուլաճեան
34 Յ. Մէրեմէ-Գուլի Բ
35 Աւետիս Կիրտաղեան Բ 8
36
37

(Բ. Վիճակ)

Պեշիկթաշ

38 Անդրանիկ Կրճիկեան Բ 4
39 Ալիքսան Խօրասանճեան Բ 8
40 Բարսեղ Հալաճեան

ԵԵՆԻՊԱՐՈՒ

41 Մկրտիչ Քիւրքճիպաշեան
42 Սեպուհ Մազսուտեան Բ 8
43 Մարուգէ Ֆրէնկեան
44 Պօղոս Էքսէրճեան

Իսկիւտար Ս. Խաչ

45 Սիմոն Ֆէշկեան Բ Պ
46 Ստեփան Ասլանեան

47 Յ. Շիշմանեան Տօքթօր Բ Պ

48

Իսկիւտար Ս. Կարապետ

49 Միհրան Պահճէգափուլեան Բ 3

50 Պօղոս Թորգոմեան

51 Նիկողոս Ալաճաճեան

52 Տրդատ Փափաղեան

(Գ. Վիճակ)

Գասըմ Բաշա

53 Գասպար Չէրազ

Բերա

54 Արիկ Ունճեան Բ Պ

55 Գրիգոր Սէլիմիէճեան

56 Գրիգոր Օտեան Բ Պ

57 Սերվիլէն Բ 8

58 Ռափայէլեան Տօքթօր Բ 8

59 Միքայէլ Մօմճեան Բ 8

60 Կարապետ Քաղաղեան Բ 8

61

62 Միջագիւղ

63 Յակոբ Նորատուկեան Բ 4

64 Տիգրան Եռասուֆեան Բ 8

65 Մկրտիչ Գազանճեան Բ 2

66 Նշան Օտեան

67

Պեյգօզ Եւ Ղալափա

68 Միքայէլ Մամիկոնեան Բ

(Գ. Վիճակ)

Քուզլումնուզ Եւ Իմասիէ

69 Յովհաննէս Կասեան Բ 8

70 Ստեփան Պէշկիւճեան

Գատըզիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
74 Կարապետ Շահապազեան Բ 4	Կարին	124 Ստեփան փափազեան
72 Մկրտիչ Մուրադեան Բ 7	101 Սիմոն Մաղսուտեան Բ	Տիւրիկ
Նարլըզարու	Քեօթանեա	122 Նշան Գարագալ Բ 3
73 Յակոբ Եղմէնիճեան Բ	102 Մ. փափազեան Տօթթօր Բ 8	Զեյրուհ Է. Մարաշ
Եհնիմանալիկ Սամարիոյ	Անդրիանուպօլիս	123
74 Պօղոս Մկրտիչեան Բ 8	103 Վիլհէմ Ապտուլահ Բ	Տրապիզօն
Թօփգալիու	Նիկոմիդիա	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 8
75 Յովհաննէս Մարգարեան	104 Կարապետ Ս. Իւթիւճեան Բ 2	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	Ակն	125 Մելքօն Իսկէնտէրեան Բ 8
Աստուածածին	105 Աւետիս Պարոնեան	Տիգրանալիքա
76 Գարեգին Յ. Մէլիքեան Բ 2	Ղարափաար	126 Միհրան Զօղանեան
Գուրուքեշմէ	106	Վան
77 Աստիա Իկիտպաշեան	Արաբկիր	127
Հիսար Է. Պօյաճի գիւղ	107 Կարապետ Խաչիկեան	Ադրամար
78 Յովհաննէս Արշակունի Բ 8	Բաղէշ	128
Նոր գիւղ Է. Սրենիա	108	Հայեպ Է. Այնրապ
79 Ղազար Հովուեան	Պրուսա	129
Պալատ	109 Բրիտանուս Ղազարոսեան	Սեբաստիա
80 Յովհաննէս Կրճիկեան Բ 5	Եղովկա	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
84 Տելեմաք Էքսէրճեան	110	Ռուսնուգ
82	Ամասիա	131
Քարակեօմիքիւկ	111 Համբարձում Ալաճաճեան	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան	Բալու	132 Արրահամ Յ. Այվազեան
84	112 Յովհաննէս Ազնաւորեան Բ 6	Զմշկածագ
(Ե. Վ. իճակ)	Եղեսիա	133 Համբարձում Սարգէշիչեան
Սամարիա	113 Յակոբ Իւթիւճեան	Գաղատիա
85 Ալիքսան Պէշիքեան	Մանգըլլա	134
86 Եղիազար Մէլիքեան Բ 8	114	Ատանա
87 Մինաս Ճաֆճաֆեան	Հաճըն	135
88 Նազարէթ Շահապազեան	115	Սղերդ
89 Յարութիւն Թիւլեան	Երզնկա	136 Մատթէոս Ալէքսանեան Բ 8
90 Յակոբ Արշակ	116 Ռէթէոս Պէրպէրեան	Եօզղատ
91 Սեպուհ Թիւլսիւղեան Բ 6	Թեքիրտաղ	137 Լօղօֆէթ Պալեօղեան
92	117 Տիգրան Գ. Սինանեան	Մալաթիա
93	Կեսարիա	138 Գէորգ Վարդանեան Բ 2
94	118 Գէորգ Գըլճճեան Բ 3	Իգմիր
Խասգիւղ	119	139 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրքի Բ 5	Պալքեսեր	Եգիպտոս
96 Ռէթէոս Պէշիկճեան	120	140 Արրահամ Մուրադեան Բ
97 Սարգիս Արրահամեան Բ 8		
98 Մ. Արծրունի Տօթթօր Վճն		
99 Սարգիս Քալուքճեան Բ 8		
100 Աթանազիոս Արապեան Բ 8		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Ուղերձ ի պատասխանի Նախագահական դրոյն. — Ծրագիր Ատենապետաց դիւանի (Դռնիակ) :

Բ. Հրաժարում և ընտրութիւն Մայր Դիւանի անդամաց (Դռնբաց) :

Գ. Խնդիր տեղափոխութեան ժողովարանի և բացակայութեան երեսփոխանաց. — Տեղեկագիր Յանձնախմբին (Դռնբաց) :

ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն անձնական տկարութեան, եւ ժողովին երրորդ Ատենապետն Յ. Մէրեշմ-Գուլի Էֆէնտի ուղեւորութեան պատճառաւ բացակայ գտնուելով ժողովէն՝ ընդ առժամեայ Նախագահութեամբ Գեր. Տ. Սիմէօն Կալիսկոպոսի Աէֆէրեան՝ երիցագունին Կալիսկոպոսաց, եւ առժամեայ Ատենապետութեամբ Տիգրան Էֆէնտի Նուսուֆեան՝ առեանը բացուեցաւ ժամը 8 ին, ի ներկայութեան 39 երեսփոխանաց, որոց թիւը 47 ի յանգեցաւ ի վերջէ :

1. Տ. Յակոբ վարդապետ Աշոտ
2. Սիմոն Էֆէնտի Ֆէլէկեան

Գրով ծանուցած էին թէ անձնական տկարութեան պատճառաւ ստիպուած են բացակայ մնալ այսօրեայ նիստէն, նոյնպէս,

3. Տ. Սահակ Գահանայ Տ. Սարգսեան

Ծանուցած էր թէ՛ ուղեւորութեան պատճառաւ ժամանակ մը ստիպուած է բացակայ մնալ ժողովոյ նիստերէն : Ատենապետ Էֆէնտին այս բացակայից անուններն յիշատակելով անոնց բացակայութիւնն իբր օրինաւոր արձանագրել տուաւ ներկայութեան տոմարին մէջ :

1.

Բացակայութիւն երեսփոխանաց
Երեսփոխաններէն

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երեսփոխաններէն նաեւ Ռւնճեան Արիկ Էֆէնտին նամակ մ'ուղղելով կը ծանուցանէ թէ Սովկեղոց Խնամատար

Յանձնաժողովը՝ որու անդամ է ինք, ուրբաթ օրեր գումարուելուն՝ չի պիտի կրնայ ներկայ գտնուիլ ժողովոյ նիստերուն, մինչև որ վերջանայ Յանձնաժողովոյ աշխատութիւնն։ Ահաւասիկ կը ներկայեմ ձեզ իւր նամակը։

Վսեմաշուք Տօրթէօս Սէրվիշէն էֆէն-տի Ա. Ատենապետ Ազգ. Ժողովոյ։

Տէր

Որպէս ծանօթ է Ձեր Վսեմութեան՝ Հայաստանի Սովետոյ խնամատար Կեդր. Յանձնաժողովոյ անդամակից գտնուելով՝ ամեն Ուրբաթ և Կիրակէ օրեր նիստ ունենալուն առթիւ ստիպուած եմ ընդհ. ժողովոյդ ներկայ չկարենալ գտնուիլ։

Տարակոյս չկայ, Տէր, թէ իմ սոյն բացակայութիւնն անգի պիտի ունենայ մինչև ցաւարա գործոյն, զոր ի գիտութիւն յայտարարելով՝

Մնամ խորին յարգանքօք

Աբիկ Ռեմեան

1880 Յուլիս 25

Գատընէօյ

Կը տեսնէք որ Ունճեան էֆէնտի բացակայութեան պատճառն կանոնին նախատեսած եւ ընդունած պատճառներէն չէ. ուստի հարկ է որ ժողովիդ որոշումը խնդրեմ թէ կընդունի՞ այս պատճառն, եւ կը հաճի՞ արտօնել Ունճեան էֆէնտին ցաւարա աշխատութեան Յանձնախմբին բացակայ մնալու ժողովոյ նիստերէն։

ԶԱՅՆԵՐ. — Այո, ամենայն յօժարութեամբ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Շնորհակալ եմ որ Ունճեան էֆէնտին հաճեր է իւր բացակայութեան պատճառն զէթ հաղորդել ժողովին։

մինչդեռ երեսփոխաններ կան, որ ոչ թէ միայն նիստերէն բացակայ կը մնան, այլ երկուող մ'անգամ չեն դրեր պատճառը ծանուցանելու համար։

ԶԱՅՆԵՐ. — Քուէ։

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ խնդիրն՝ եւ ժողովը միաձայն Ունճեան էֆէնտի բացակայութեան պատճառը ԿԸՆԴՈՒՆԻ։

2.

Հրաժարական երեսփոխանաց ոմանց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երեսփոխաններէն Պառնասեան Պօղոս, Էսաեան Մկրտիչ, Պօյաճեան Յովհաննէս եւ Քօլօեան Աւետիս էֆէնտիներն, ինչպէս նաեւ երդնկայի նորընտիր Առաջնորդ Տ. Վահան վարդապետ հրաժեշտ տուած են իրենց երեսփոխանական պաշտօնէն։ Ահաւասիկ իրենց հրաժարագրերն, զորս մի առ մի կը ներկայեմ ժողովոյդ որոշման։

Ա.

Հրաժարագիր Պ. Պառնասեան Էֆէնտիի

Մեծապատիւ Տէր,

Ատենապետ Ազգ. Ժողովոյ

Գրեթէ տասն տարի կը լինի որ Ազգ. Ժողովոյ անդամակցութեան պատիւն ունեցայ, և միշտ ջանացի ըստ կարի պաշտօնս կատարելով ընտրողացս վստահութեան պատասխանելու։ Սակայն ժամանակէ մ'ի վեր վատառողջ վիճակս և իմ անձնական զբաղմունքս ստէպ բացակա-

յութեանս պատճառ կը լինին, ուստի կը պարտաւորիմ խնդրել որ ընդունիք հրաժարականս։

Մնամ ձեզ ի. Ծ.

Պօղոս Պառնասեան

Կ. Պօլիս 19 Սեպտ. 1880

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը տեսնէք, Պառնասեան էֆէնտին կը հրաժարի երեսփոխանական պաշտօնէն, պարզապէս իւր զբաղմանց եւ վատառողջութեանը պատճառաւ։ Այս հրաժարականին նկատմամբ գիտողութիւն մ'ունիք։

ԶԱՅՆԵՐ. — Ոչ, պարզ հրաժարական մ'է։

ՈՒՐԻՇ ԶԱՅՆԵՐ. — Քուէի գրէք։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո, պարզ հրաժարական մ'է, ահաւասիկ քուէի կը դնեմ զայն՝ քանի որ գիտողութիւնս չունիք։

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Պառնասեան էֆէնտի հրաժարականն եւ ժողովը միաձայն ԿԸՆԴՈՒՆԻ զայն։

Բ.

Հրաժարագիր Մ. Էսաեան Էֆէնտիի

Վսեմապալ էֆէնտի,

Ատենապետ Ազգային Ժողովոյ

Իմ զբաղեալ վիճակս պատճառ եւ զած էր արդէն Ազգ. Ժողովոյ նիստերէն ստէպ բացակայ մնալուս, այս անգամ՝ ճամբորդելու հարկ մ'ալ վրայ գալով՝ բոլորովին անկարելի կըլլայ ինձ երեսփո-

խանական պարտաւորութիւնս կատարել։ Ուստի յօգուտ ազգային գործոց ներկայ հրաժարագիրս մատուցանելով, կաղաչեմ որ Պատկառելի Ազգ. Ժողովն զայն անպատճառ ընդունել բարեհաճի։

Մնամ

Յարգանաց հաւաստեօք

Մ. Էսաեան

22 Սեպտ. 1880

(Յետ ընթերցման)

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը տեսնենք որ Էսաեան էֆէնտին իւր հրաժեշտին պատճառցոյց կուտայ ուղեւորութիւնն։ Կանոնը կը ներէ արդէն ճանապարհորդ երեսփոխանաց բացակայութիւնն եւ ըստ որում Էսաեան էֆէնտին ծառայութիւններ մատուցած է, կառաջարկեմ մերժել իւր հրաժեշտը։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ահաւասիկ այս ընթացքն է որ մեր ձեռքերը կը կապէ։ Երբ Պառնասեան էֆէնտին կը հրաժարի, խնդիր չյուզուիր եւ իւր հրաժարականն կընդունուի, իսկ երբ կարգն Էսաեան էֆէնտին կուգայ, իսկոյն իւր ծառայութիւնները կը յիշուին, եւ հրաժեշտին մերժումը կառաջարկուի։ Որպէս թէ միւսն անօգուտ անձ մը լինէր, եւ իւր հրաժարականն ընդունելութեան արժանի։

Ես ալ գիտեմ Էսաեան էֆէնտի օգտակար անձ մը լինելը, սակայն Պառնասեան էֆէնտի ներկայութիւնն ալ ժողովին մէջ օգտակար էր նոյնքան, եւ անոր հրաժարականն ընդունեցանք, զի կը յայտարարէր թէ անկարող էր շարունակելու պաշտօնն, զնոյն կը կրկնէ նաեւ Էսաեան էֆէնտին. ինչ օգուտ կը ծագի ուրեմն անոր հրաժարականը մերժելով։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երկու ատենաբան թեր ու դէմ խօսեցան սոյն հրաժարականին նկատմամբ, եւ այժմ ուրիշ խօսք խնդրող չը

կայ, ուստի խնդիրն ժողովին որոշման կենթարկելով:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Էստեան էֆէնտիի հրաժարականն, եւ ժողովը 4 քուէի ընդդէմ՝ 24 քուէով ԿԸՆԴՈՒՆԻ զայն:

Գ.

Հրաժարագիր Յ. Պոյաճեան Էֆէնտիի

Մեծապատիւ Ատենապետ էֆէնտի
Ազգային ժողովոյ

Ազգային ժողովոյ մէջ ունեցած երեսփոխանական պաշտօնէս հրաժարած լինելու յայտնող դրութիւնը չեմ գիտեր թէ ինչ պատճառաւ ժողովին չէ ներկայացեր, եւ այնպէս կը կարծեմ թէ ժամանակին ձեռքերնիդ հասած չէ:

Ուստի ներկայիւս կը կրկնեմ նոյն հրաժարականս. հետեւաբար Համարակալութեան դիւանի համար ալ հրաժարական չտուող երեսփոխանի մը ընտրութեան ձեռնարկէք, Ազգային կենսական գործերը ետ չմնալու համար:

Խնդրեմ ընդունեցէք իմ անկեղծ յարգանքս ու հրաժարականս:

Յ. Պոյաճեան

8 Օգոստ. 1880

(Յետ ընթերցման)

ԹՈՐԳՈՄԵԱՆ Պ. ԷՖ. — Պոյաճեան էֆէնտին բաւական ժամանակէ ի վեր երեսփոխանի պաշտօն կը վարէ, եւ արժանաւոր անձ մ'է. ընտանիքն ուրեմն որ չուզենք զրկուիլ իւր աջակցութենէն, մանաւանդ որ Խորհր-

դարանական Յանձնախումբն ասկէ առաջ մեծ պաշտօնով մը զինքը դաւառներն յուղարկած էր իւր պատուիրակ, եւ դեռ չստացանք իւր գործոց համարն, ուստի կառաջարկեմ չընադուել անոր հրաժարականն, մինչեւ որ յիշեալ պատուական էֆէնտին չը ներկայէ մեզ իւր համարատուութիւնն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ինչ որ կուզէի խօսիլ, ըսաւ արդէն մասամբ Խորհումեան էֆէնտին: Ամեն անոնք որ ազգային պաշտօններով դաւառները կուղարկուին, անհրաժեշտ է որ վերադարձին իրենց համարը տան: Պոյաճեան էֆէնտին ալ նոյնը պարտաւոր էր ընել, ուստի կը ձայնակցիմ Խորհումեան էֆէնտիի՝ անոր համարատուութիւնն ստանալու համար:

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — Կուզեմ այս համարատուութեան կէտին վրայ տեղեկութիւն մը տալ եւ պարզել խնդիրն:

Բարենորոգմանց Յանձնախումբն էր որ Պոյաճեան էֆէնտին պատուիրակ կարգեց, եւ Պոյաճեան էֆէնտին արդէն իւր գործոց համարը մատոյց Յանձնախումբին, վասն զի բնական է որ պաշտօնատարի մը համարն զայն ընտրող մարմինն կստանայ: Իսկ Յանձնախումբն ալ իւր համարը Ազգ. ժողովին մատոյց դոնտակ նիստի մէջ, եւ այս առթիւ Պոյաճեան էֆէնտի տեղեկագրերն ժողովոյդ հաղորդեց: Այս համարատուութենէն դուրս կը մնար այն կէտն թէ ինչ պատճառներով Տիգրանակերտի մէջ բարենորոգմանց խնդիրն չանցադրութեան մատուցաւ: Այս կէտն ալ, կը յիշէք անշուշտ, որ Փիլիպպոս եպիսկոպոսի յաբուցած խնդրոյն առթիւ պարզուեցաւ ժողովին մէջ, եւ նոյն խնդրոյն հետ փակուեցաւ: Հետեւապէս չեմ կարծեր որ Պոյաճեան էֆէնտին տակաւին համարատուութեան պարտաւորութիւն մ'ունենայ այս ժողովին առջեւ:

Բայց ինչո՞ւ Պոյաճեան էֆէնտին Հայաստանէն վերադարձին կը լքանէ իւր երեսփոխանի աթոռն: Այս մասին ինչ որ ինք ըսաւ ինձ սա է թէ՝ շատ կարօտութեանց մէջ դտեր է դաւառներն, թէ մենք հոս անոնց

պիտոյքները հոգալու համար ոչինչ չենք ընել: ուստի ինք չհանդուրժելով այս վիճակին՝ լուսադրին կը համարի հրաժարիլ պաշտօնէ: որ զէթ իւր խիղճն հանդարտ լինի:

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Իմ ըսելիքներուս մեծ մասն ըսաւ ֆախաղեան էֆէնտին: Եթէ այս ժողովը համար մ'ունի առնելիք, այն ալ բարենորոգմանց Յանձնախումբէն է, եւ ոչ թէ Պոյաճեան էֆէնտին: Իսկ Պոյաճեան էֆէնտի իւր համարն Յանձնախումբին եւ Յանձնախումբն ալ այս ժողովին մատուցեր է, ուստի խնդիր չմնար այս մասին: Ասկայն ես կը բաղձամ որ Պոյաճեան էֆէնտին երեսփոխան մնայ, ոչ թէ իւր համարատուութիւնը կատարելու համար, այլ վասն զի ինք անձամբ դաւառաց պէտքերը քններ, շօշափեր է, եւ դարմաններ կը յայտնէ, պէտք է որ բացատրէ նոյն իսկ այս ժողովին մէջ ինչ որ տեսեր է ինք, եւ ինչ որ հարկ կը համարի ընել, որպէս զի կարելի լինի դարման տանիլ: Այս տեսակէտով կառաջարկեմ մերժել Պոյաճեան էֆէնտիի հրաժարականն եւ զինքը լսել:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ես շատ ըսելիք չունիմ Պոյաճեան էֆէնտիի նկատմամբ, վասն զի ֆախաղեան էֆէնտին յայտարարեց թէ Պոյաճեան էֆէնտին ուսկից որ ընդունած է պաշտօնն, մատուցած է իւր համարն անոր. սակայն սկզբան խնդիր մը կայ, որ այս հրաժարականի խնդրէն ծագում առաւ. եւ հարկէ զայն պարզել: Ատենախօսներէն ոմանք այն պիտի կարծիք մը մէջ ընելին, որպէս թէ ամեն անոնք որ այս ժողովին հետ գործ մ'ունին, կամ համարատուութեան պարտաւորութիւն մ'առ այն, հարկ է որ անգամ միանայ այս ժողովին եւ աթոռ ունենան հոս:

Զգիտեմ թէ այս սկզբունքն ի՞նչ տրամաբանութեամբ եւ ի՞նչ տեսակէտով կստեղծեն, եւ ի՞նչպէս կը պահանջեն մանաւանդ երեսփոխանէ մ'իւր աթոռը պահել, երբ կը հրաժարի նա, ըսելով թէ դուք ի դուր ժամանակ կը վատնէք, ուստի իմ խիղճս չտանիր աթոռակցիլ ձեզ:

Այսպիսի առարկութեամբ մը հրաժարող երեսփոխանէ մը պահանջել որ իւր աթոռը պահէ ժողովին մէջ, կը նշանակէ ըսել անոր, չարչարակից եղիր մեզ:

Ասկայն բոլորովին այլ է երեսփոխանական պաշտօնն, եւ այլ՝ ժողովին հետ գործ մը, կամ համարատուութեան պարտաւորութիւն մ'ունենալն: Երբ մէ տարրեր այս երկու կէտերն իրարու հետ շփոթելով՝ կարելի չէ որ ժողովն իւր համարատուութեան իրաւունքն գործադրելու եղանակ մը գտած ըլլայ, եւ ոչ ալ համարատու հարկադրի իւր պարտաւորութիւնը կատարելու:

Ո՞ր են համարատուութիւններն այն անձանց, որ 18-20 տարիներէ ի վեր ազգին մէջ կարեւոր պաշտօններ վարեցին, մեծամեծ գործեր անօրինեցին եւ սակայն առանց իրենց գործոց համարը տալու, բաժնուեցան մեզմէ՞ զացին: Անոնք որ կը նահանջին համարատուութենէ կրնան պատասխանատուութենէ զերծանիլ նախապէս, սակայն բարոյապէս երբեք մշտապէս պատասխանատու են ազգին առջեւ, ապագային եւ պատմութեան առջեւ: Այս բարոյական պատասխանատուութիւնն աւելի ծանր կը կռւէ, քան զմիւսն: Բայց ի՞նչ է պատճառ որ մեր մէջ այսքան նուազ կարեւորութիւն ունի համարատուութեան սկզբունքն: Մենք միշտ այս մասին այն թուիքն ունեցեր ենք որ համարատու միայնակ ինքն է պարտաւոր կանխել ինքնաբեր եւ իւր համարը տալ մեզ, իսկ համարատու չունի ոչ պարտաւորութիւն, ոչ իրաւունք համար պահանջելու, երբ պաշտօնակալը նահանջէ համարատուութենէ կամ ինքնովի չմատուցանէ: Ահա այս տեղն է սխալը:

Այսքան տարիներէ ի վեր ժողովներ մեծ մեծ պաշտօններ կը վարեն ազգին մէջ. Յանձնաժողովներ, պատուիրակներ դաւառները կերթեւեկեն, բայց ե՞րբ արդեօք ի պաշտօնէ հրաւիրուեցան անոնք ի համարատուութիւն, եւ ո՞վ արդեօք մեզմէ օր մը հարցուց անոնց թէ ինչպէս կատարեցին իրենց պաշտօնն եւ ինչ գործեցին:

Ժամանակաւ Աղաբէկեան Սարգիս էֆէնտին կարեւոր պաշտօնով մը Զէյթուն դըրկուեցաւ, եւ ես տակաւին չտեսայ անոր հա-

մարատուութեան տեղեկագիրն, եւ միթէ գուր տեսա՞ք զայն: Այսպէս քանի քանի կարեւոր համարատուութիւնք կան, զորս ոչ ոք պահանջած է: Պիտի գայ ժամանակ մը՝ որ այս աթոռներուն վրայ պիտի յաջորդեն մեզ այնպիսի անձինք, որ աւելի խորաթափանց պիտի ըմբռնեն երեսփոխանութեան պաշտօնին ուղին եւ պիտի դատարկեման այն անտարբերութիւնն, որով կը նայինք համարատուութիւն կոչուած մեծ իրաւունքին վրայ, որ մի էական տարրն է սահմանադրական դրութեան:

Արդ՝ համարատուութեան խնդիրն յարաբերութիւն չունի երբեք երեսփոխանի մը հրաժեշտի խնդրոյն հետ: Երեսփոխան մ'ազատ է շարունակել կամ ոչ իւր պաշտօնն, եւ ես Գրիստոստուր էֆէնտիի համամիտ եմ որ պէտք է զոք ստիպել բռնի պաշտօն վարելու: Ժայտուութիւնը ձրի է, եւ կարողը կը տանի զայն: Իսկ համարատուութիւնը պաշտօնն ստանձնողին անխուսափելի պարտաւորութիւնն է, եւ եթէ այդ պարտաւորութիւնն զանց առնէ, համարատուին իրաւունքն է կոչել զայն, եւ համար պահանջել: Իսկ ըսել թէ՛ այս կամ այն պաշտօնակալն կամ պատուիրակն ըստ որում չտուաւ մեզ իւր պաշտօնին համարն, ուստի պէտք է երեսփոխան մնայ, անպատեհ է եւ անօգուտ:

Ուստի անջատելով իրարմէ՛ հրաժարման եւ համարատուութեան խնդիրներն, որ արդէն իրարու հետ բնաւ առնչութիւն մը չունին, կառաջարկեմ ես առաջնոյն համար՝ ընդունել Պոյաճեան էֆէնտիի հրաժարականն, իսկ երկրորդին նկատմամբ՝ կառաջարկեմ համարատուութեան կոչել այն ամեն անձերն որ գործ ունեցած են ազգին հետ, եւ չեն կատարած իրենց համարատուութիւնն: Այսպէս վայել է մեզ ընել այս խնդրոյն մէջ. քանի որ ազգին ներկայացուցիչն ըլլալու յաւակնութիւնըն ունինք:

ՇԱՏ ՄԸ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ:— Կը ձայնակցինք:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Պոյաճեան էֆէնտին խորհրդարանական Յանձնախումբին կողմէ պաշտօնի կոչուեցաւ եւ ի հարկէ իւր

համարը՝ զինքն ընտրող Յանձնախումբին պիտի տար: Արդէն Յանձնախումբն անոր համարատուութեան մեծ մասն առած եւ միայն վերջին մասը մնացած էր, այսինքն այն կէտն թէ ինչո՞ւ չյաջողեցաւ բարենորոգմանց խնդիրն: Այս մասն անոր համար մնաց, որ երբ Պոյաճեան էֆէնտին վերադարձաւ ի Պոլիս, Յանձնախումբն արդէն պաշտօնէ քաշուած եւ Ազգ. ժողովը Սրբազան Պատրիարք Հօր յանձնած էր վերստին գործն: Ստոյգ է որ Պոյաճեան էֆէնտին Կրօն. ժողովին ներկայացաւ, եւ քանի մը բացատրութիւններ տուաւ, բայց ժողովը դրով ուղեց բացատրութիւններն: Թերեւս Պոյաճեան էֆէնտին մատուցած լինի իւր տեղեկագիրը Սրբազան Պատրիարք Հօր, թէ եւ Վարչութեան հաղորդուած է:

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես միշտ հրաժարականաց ընդունելութեան կողմը գտնուեմ եմ, բայց ըստ որում Պոյաճեան էֆէնտին իւր պատուիրակութեան համարն, եւ այս առթիւ գաւառաց պէտքերուն վրայ տեղեկութիւններ պիտի տայ, ուղեցի որ իբր երեսփոխան ձայն պիտի տայ, եւ այս պատճառաւ ձայնակցեմ եղայ Թորգոմեան էֆէնտիի առաջարկին:

Իսկ թէ Պոյաճեան էֆէնտին իւր համարատուութեան մէկ մասն Յանձնախումբին, յեւ մէկ մասն ալ Սրբազան Պատրիարք Հօր մատուցե՞ր է կամ ոչ, ինձ չվերաբերիր զիտնալ, քանի որ այս ժողովին տուած է:

Ինչպէս անցեալ տարի առաջարկած եմ այս ժողովին մէջ, երբ մէկը պաշտօնով մը դաւառ մը կերթայ, վերադարձին իւր գործոց համարը պէտք է տայ. նոյնը կը սնդեմ միշտ: Քալով վաշային այն դիտողութեան թէ մինչեւ ցարդ Ազգ. ժողովը բնաւ իւր համարատուութեան իրաւունքը չէ գործադրեր, իմ կարծիքս այն է, թէ ով որ ազգին մէջ պաշտօն մը կատարեր, եւ իւր համարը չէ մատուցեր, Ազաբէկեան էֆէնտին, եւ ուրիշ ով որ կայ, պէտք է անպատճառ ի համարատուութիւն հրաւիրել: Իսկ այն կարծիքը թէ այս ժողովին չը պիտի տրուի համարն, չեմ ընդունիր ես . . . :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — (Ընդմիջելով) Սխալ է ձեր կարծիքն:

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Շարունակելով) Զի երեսփոխանական ժողովն ամէն գործի համարը պահանջելու իրաւունք ունի:

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — Խնդիր կը յուղտի թէ Պոյաճեան էֆէնտին այս ժողովին համարատու է՞ թէ ոչ: Նախ՝ այս կէտին վրայ խօսելով՝ բացարձակապէս կը յայտարարեմ թէ երբէք համարատու չէ նա այս ժողովին, զի այս ժողովն չէր անոր պաշտօն յանձնողն այլ բարենորոգմանց Յանձնախումբն պաշտօնն ընդունեց, ուստի անոր միայն կը պարտաւորի իւր գործոց համարը տալ: Երկրորդ՝ այսպիսի համարատուութեան մ'եղանակն բոլորովին տարբեր է այն կերպէն, որ ի գործ կը դրուի սովորաբար համարատուութեան պարագայից մէջ: Երբ գաւառներն յատուկ պաշտօնով պատուիրակ մը կուղարկուի չապսեր որ իրեն յանձնուած գործն աւարտի եւ յետոյ ներկայէ իւր համարն: Այլ վասն զի զինքն ընտրող մարմնոյն հետ անընդհատ կը թղթակցի, իւր արարքն, եղելութիւնները հետզհետէ կը տեղեկագրէ: Ըսել է թէ իւր պաշտօնի անցած օրէն՝ պարբերաբար կը կատարէ իւր համարատուութիւնն, իսկ եթէ աւարտէ պաշտօնն, իւր գործոց վերջին մասն ալ կը տեղեկագրէ եւ կամեղջղացնէ այսպէս իւր համարատուութիւնն:

Այս եղանակաւ ահաւասիկ Պոյաճեան էֆէնտին իւր պաշտօնին համարատուութիւնը մեծ մասամբ կատարած էր բարենորոգմանց Յանձնախումբին առջեւ, եւ միայն վերջին մասըն մնացած էր, վասն զի երբ Պոյաճեան էֆէնտին Պոլիս վերադարձաւ Յանձնախումբն քաշուած էր գործէ: Իսկ Յանձնախումբն ալ իւր համարը գոնիակ նիստի մէջ ներկայեց ժողովոյդ, եւ Պոյաճեան էֆէնտի տեղեկագրերն, որ ընդարձակ գրութիւններ էին, հաղորդեց ձեզ այս առթիւ, իսկ վերջին մասն եկաւ ժողովիդ փլիպպոս եպիսկոպոսի դատին հետ, եւ ժողովիդ տեղեկանալով իրաց վիճակին՝ փակեց խնդիրն, իւր վճիռը տալով:

Այս է ահաւասիկ եղելութիւնն որ կ'երեւի թէ ընդգիմախօսներու յիշողութենէն վրիպեր է: Բայց ինչու կը հրաժարի Պոյաճեան էֆէնտին, պատճառն յայտնեցի արդէն: Բաւական ժամանակ իբր պատուիրակ գաւառները շրջեցաւ, այս առթիւ տեսեր է թէ դաւառները մեծամեծ պիտոյքներ ունին, եւ զանոնք գոհացնելու համար՝ միջոցներ առաջարկեր է, սակայն ինչպէս կըսէ ինք, Վարչութեան քով պատրաստականութիւն չէ գտեր, ինչ որ պէտք է ընելու, ուստի ցաւելով կը քաշուի երեսփոխանութենէ:

Սակայն պէտք է նաեւ գիտնալ որ Պոյաճեան էֆէնտին իւր առաջարկութիւնները Սրբազան Պատրիարք Հօր ներկայացուցեր է, եւ ոչ թէ Վարչութեան: Արդ՝ այս պարագային մէջ ի՞նչ կը մնայ մեզ ընել, — ընդունիլ կամ մերժել իւր հրաժարականն, եւ միանգամայն տեղեկանալ իրմէ թէ ի՞նչ պէտք է ընել, գաւառներու կարօտութիւնները դարմանելու համար:

Ստեփան վաշան համարատուութեան ըսկըզբունքին վրայ խօսելով՝ գանգատեցաւ թէ մեր մէջ անոր գործադրութեան մասին անտարբերութիւն մը կը տիրէ: Փոքրիկ սպի մի բացաւ, որու ներքեւ մեծ վէրք մը ծածկուած է: Ես ալ տասը տարիէ ի վեր երեսփոխանական պաշտօն կը վարեմ, եւ դեռ չտեսայ որ գէթ միանգամ համարատուութիւն մը եւ դատաստան մը տեղի ունենար: Մեր Վարչութեան օրով բոլոր համարատուութեան տեղեկագրերն եկան, եւ քննութեան յղուեցան եւ նախաքննիչ Դիւանէն միայն Վանօրէից խորհրդոյ տեղեկագրին նկատմամբ պատասխանը եկաւ, այն ալ ժողովն ուշադրութեան չառաւ:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — (Ընդմիջելով) Զնչման ներքեւ նկատողութեան չառնուեցաւ այդ տեղեկագիրն:

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Այս ժողովն սկիզբէն ի վեր ընտրող իսկ համարառու չէ կրցած լինել: Ես ժրմ հարցապնդման ձեւը . . . :

Համարառութիւններ կատարել: Իւր ուշադրութիւնն ամենէն աւելի հարստահարութեանց խնդրոյն նուիրած էր եւ իւր գոյութիւնը՝ դուրսէն եկած սպառնալիքներուն դէմ պահպանելու համար՝ շատ փափկութեամբ կը վարուէր ցարդ: Բայց ինչո՞ւ այս ժողովը չէ կրցեր իւր համարառութեան իրաւունքն բոստ արժանւոյն գործադրել: Կրնա՞ր պատճառն ըմբռնել, երբ եղելութիւն մը յիշեցնեմ ձեզ:

Անգամ մ' երբ ժողովին մէջ խնդիր կը յուզուէր Վարչութեան անդամոց պատասխանատուութեան նկատմամբ, երեսփոխան մը, Շահապէ Էֆէնտին բնին ելաւ, եւ պատասխանատուութեան կէտն՝ Վարչական կազմակերպութեան ծրագրէն բառնալ ուղեց, ըսելով թէ մեր մէջ պաշտօններն ի վառս Աստուծոյ եւ ազգին են: Ահա այս պաշտօնարն է որ կարգելու գտնող համարառութեան իրաւունքն գործադրելու, եւ ես երբ Շահապէ Էֆէնտին բերնէն այս յայտարարութիւնը լսեցի, զգացի որ մենք դեռ Համարառութեան գաղափարն չունիմք, եւ իշխանութեան պատմականը չենք կրնար զգենուր: Գոցենք ուրեմն այս պարագան եւ անցնինք, վասն զի եթէ խօսիլ հարկ լինի, մանաւանդ իմ խօսքերն շատ երկար պիտի լինին այս խնդրոյն վրայ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Դժբաղդարար շատ անգամ կը պատահի որ ժողովոյն մէջ այնպիսի խնդիրներ մեր դէմ յարուցուին, որոց ամենեւին չէինք ակնկալեր, եւ որոց վիճաբանութիւնն օրակարգի խնդրոյ մ'երկարութիւնն ստանայ: Նոյնը կը պատահի այսօր: Երկու հրաժարագրերէ յետոյ կը ներկայանայ մեզ երրորդ մը, որ իբրեւ հրաժարականի խնդիր, նախորդաց պէս պէտք էր լուծուի: Ահա կը ծագի համարառութեան խնդիր մը եւ կառարկուի թէ Պայանեան Էֆէնտին դեռ իւր պատուիրակութեան համարը տուած ըլլաւ հրաժարի: Փափաղեան Էֆէնտին իր խնդիրը բառնալ կը փնայ, զՊայանեան Էֆէնտին Խորհրդարանական Յանձնապատասխանատու, եւ արդէն իսկ արտաքին հարաւորած ցոյց տալով: Բայց

սկզբան սխալն չուղղեր: Պայանեան Էֆէնտին պատասխանատու կամ ոչ, կրնայ երեսփոխանութեանէ հրաժարիլ, միշտ իւր յանձն առած մէկ պաշտօնին համար պատասխանատու մնալով առ ազգն, առ համարառութեան մարմինն: Ստեփան փաշան լաւ պարզեց այս կէտն, եւ չմիտնալով կէտերուն տարբերութիւնն ցոյց պայծառ փաստերով: Բայց Քրիստոստուր Էֆէնտին վերստին կը պնդէ, եւ որովհետեւ, կըսէ, հոս միայն երեսփոխանք ձայն ունին, պէտք է որ Պայանեան Էֆէնտին մնայ երեսփոխան, որպէս զի համար տայ մեզ աստ, իբրեւ թէ ատենի մ'առջեւ համար տալու կոչուողը, անպատճառ նոյն ատենին անգամ լինիլ պարտին:

Պէտք է վերջացնել այս խնդիրն ընդունելով Պայանեան Էֆէնտին հրաժարականն եւ երեսփոխանութեան:

Եւ կարծեմ թէ Դիւանին ալ պարտաւորութիւնն է ուշ դնել որ նոր ու միջանկեալ խնդիրներ չդրաւն օրակարգին տեղն, եւ օրակարգէ դուրս վիճաբանութիւն մը չերկարածգի առաւել քան զչափն, զոր կը սահմանէ ժողովին ներքին կանոնադրին, եւ այն ատեն միայն կրնայ ժողովը զբաղիլ այն խնդրովք, որոց համար գումարուած է:

ՁԱՅՆԵՐ. — Քո՛ւէ, քո՛ւէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շնորհակալ եմ Պէրպերեան Էֆէնտին իւր այն դիտողութեան համար՝ զոր ըրաւ խնդրոյն վիճակին վրայ, եւ որովք օգուտ կուզեմ քաղել: Ստուգիւ Պայանեան Էֆէնտին հրաժարելն առթիւ հարկ չէր համարառութեան խնդիր մ'ի վեր հանել եւ յուզել, վասն զի ինչպէս արդէն դիտողութիւն եղաւ, ոչ միայն այս երկու խնդիրներն իրարմէ տարբեր են, այլ Պայանեան Էֆէնտին իւր պատուիրակի պաշտօնն այս ժողովէն չէ տուած որ համարառութեան պարտաւորութիւն մ'ունենայ անոր առջեւ, եւ իւր հրաժարելն առթիւ ընծայէ խնդիր յուզելու թէ կատարած է արդեօք իւր այդ պարտաւորութիւնն: Դիւանն արդէն մտադիր էր ա՛յս դիտո-

ղութիւնն ընել, սակայն սպասեց որ կնճիոր պարզուի: Այժմ ժամ է որոշուիլ տալու, բայց նախ վիճաբանութեան փակուիլ քուէի պիտի դնեմ:

ՇԱՀԱՊԵՏ Ն. ԷՖ. — Անձնական դէպք մը համար խօսք կուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրեմ որ նոր ի նորոյ խնդիր չյուզէք, արդէն բաւական ժամանակ կորուսինք, եւ ժողովը այլ եւս տըրամադիր է խնդիրը գոցելու: Ուստի վիճաբանութեան փակուիլ քուէի կը դնեմ:

Հետեւապէս Ատենապետ Էֆէնտին վիճաբանութեան փակուիլ քուէի կը դնէ եւ ժողովը մեծագոյն մասամբ ԿԸՆԴՈՒՆԻ դայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճաբանութիւնը փակուած է, եւ այժմ պէտք է խնդիրը քուէարկել: Ինչպէս գիտեք մեր բուն խնդիրը Պայանեան Էֆէնտին հրաժարականն է, որու հետ համարառութեան խնդիր մ'ալ եկաւ ժողովուրդաւ: Հիմայ այս երկու խնդիրներն անջատելով իրարմէ, ինչպէս որ են իրօք, նախ քուէի կը դնեմ Պայանեան Էֆէնտին հրաժարականն երեսփոխանական պաշտօնէն:

Հետեւապէս Ատենապետ Էֆէնտին քուէի կը դնէ Պայանեան Էֆէնտին հրաժարականն, եւ ժողովը միաձայն ԿԸՆԴՈՒՆԻ դայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ այժմ համարառութեան կէտն: Բայց ըստ որում, ինչպէս յայտնեցի պահ մ'առաջ, Պայանեան Էֆէնտին այս ժողովէն ընդունած չէ պաշտօնն, որ համարառութեան լինի անոր: Ուստի այս պարագային մէջ համարառութեան խնդիր չը կայ ժողովին համար, այլ Վարչութեան կը պատկանի այս կէտն բողոքով: Ուստի թողովը դայն Վարչութեան, կը փակենք այս միջադէպն եւ կանցնինք ատենական գործողութիւնները շարունակելու:

Ժողովը ԿԸ ՀԱՆԱՆԻ Ատենապետ Էֆէնտին այս յայտարարութեան:

Գ.

Հրաժարագիր Փօլոյեան Էֆենտին

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտին
Ազգային ժողովոյ

Ներկայ ամսոյս 4 եւ 11 թիւ ուղղեալ նամակներովդ կը ծանուցանէք որ Ազգ. ժողովոյ ընտրութեամբ՝ Նախաձեռնութեան դիւանի անդամ ընտրուած ըլլալուս միւս ընկերներու հետ միանալով Ատենապետ ընտրենք եւ Մայր դիւանին հաղորդենք, սակայն տասն անգամէն աւելի երեսփոխանական ժողովոյ նիստերէն բացակայ գտնուիլս՝ չեմ յուսար որ կարծուի թէ անդիտութեամբ եղած ըլլալու չափ պարզմտաբար հաւատք ընծայուի, քանզի դիտնալով որ ըստ ներքին կանոնագրութեան հետզհետէ երեք անգամ բացակայ եղողը հրաժարեալ կը համարուի, օրինաց սոյն տրամադրութեան համեմատ արդէն հրաժարեալ եմ երեսփոխանութեանէ: Գալով այս անգամի Նախաձեռնութեան դիւանի անգամակցութեան մասին, արդէն երեսփոխան չըլլալով՝ Դիւանի ալ անգամ չկարենալ ըլլալս բնական ըլլալուն այն երեսփոխան Էֆէնտիններու որ իրենց քուէովը պատուեր են զիս, նոցա չնորհակալութիւնս յայտնելով հանդերձ՝ քանի որ անձնական զբաղմունքներս չեն ներեր որ խղճի մտօք պարտքերս կատարեմ որ եւ իցէ ազգային գործերու մասին, կը խնդրեմ որ յատենի ժողովոյ թէ երեսփոխանութենէ եւ թէ Նախաձեռ-

նույն ժամանակ անդամակցութեան է պարզապէս հրաժարական տուած ըլլալս յայտնելով

Մնամք յարդանօք

Ա. Մ. Գոլոյեան

13 Օգոստ. 1880

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ պարզ հրաժարական մ'ալ : Դիտողութիւն ունի՞ք այս մասին :

ԶԱՅՆԵՐ. — Գուէ, քուէ :

Հետեւապէս Ատենապետ է ֆէնտին քուէի կը դնէ Գոլոյեան է ֆէնտին հրաժարականն, եւ ժողովը միաձայն կը ՆԳՈՒՆԻ զայն :

Դ.

Հրաժարագիր Տ. Վահան վարդապետի

Վսեմափայլ Տէր

Ատենապետ Ազգ. Ընդհ. Ժողովոյ

Եւդոկիոյ առաջնորդութեան կոչուած լինելով կեդր. Ազգ. վարչութեան որոշմամբն ու հրամանաւ կը պարտաւորիմ մեկնել ի Կ. Պօլսոյ հրաժարելով երեսփոխանութենէ Պատկ. Ժողովոյդ :

Փափաքելի էր ինձ պաշտօնավարել ի հայկական այն դաւառան, որոց բաւական ատեն ծառայած եմ հաւատարմութեամբ, բայց որովհետեւ ձայն ժողովրդեան եւ արդի սահմանադրական մեր օրէնքն հրաման Պատրիարքական կը պարտաւորեն զիս դնալ Եւդոկիա, ի ծայրս Փոքր հայոց, ուստի կը թողում Մեծ-Հայքն ու

յա, որք անշուշտ քան զիս սիրողք եւ կաթողինք են Հայրենեաց :

Մնամ աղօթարար

Հրաժարեալ Եկեղ. Երեսփ.

Վահան Վ. Պարտիզակցի

1880 Օգոստ. 25

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տ. Վահան վարդապետ առաջնորդական պաշտօնի կոչուած եւ մեկնած է արդէն մայրաքաղաքէս : Իւր հրաժարականը խնդիր չվերցնէր. ուստի միայն ձեր քուէին կենթարկեմ զայն :

Հետեւապէս Ատենապետ է ֆէնտին քուէի կը դնէ Տ. Վահան վարդապետի հրաժարականն, եւ ժողովը միաձայն կը ՆԳՈՒՆԻ զայն :

3.

Հրաժարագիրք Ազգ. վարչութեան կրկին ժողովոյ

Ազգային վարչութեան կրօնական եւ Գաղաքական ժողովոյ կողմէ մատուցեալ յետագայ հրաժարագրերը կարդացուեցան :

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Նախագահ Ազգ. Երես. Ժողովոյ

Կրօնական ժողովոյս երկամեայ շըրջանն ըստ տրամադրութեան 26 ըդ. յօդուածոյ Ազգ. Սահմանադրութեան լրացած ըլլալով կը խնդրեմք Ձեր Բարձր Սրբազնութենէն որ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ յառաջիկայ բացման օրը նոր

ընտրութեան համար հարկ եղածը տնօրինել բարեհաճիք : Մնամք

Բարձր Սրբազնութեան Ձերում

Մ. Եպիս. Իգմիրլեան

Կ. Եպիս. Սեբեթեան

Պօղոս Վ. Խօյտամեան

Գաբրիէլ Վ. Թաքաբեան

Ներսէս Վ. Ասլանեան

Սահակ Քննյ. Տ. Սարգսեան

Արիստակէս Քննյ. Մամբրեան

Խորեն Քննյ. Փեղիվանեան

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Նախագահ Ազգ. Երեսփ. Ժողովոյ

Գաղաքական ժողովոյ երկամեայ շըրջանն ըստ Ազգ. Սահմանադրութեան լրացած ըլլալով հարկ կը դատեմք Ձեր Բարձր Սրբազնութեան մատուցանել մեր ներկայ հրաժարականը, եւ կը խնդրեմք որ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ յառաջիկայ բացման օրը նոր ընտրութեան համար հարկ եղածը տնօրինել բարեհաճիք

Մնամք Բարձր Սրբազնութեանդ խոնարհ ծառայք

Մկրտիչ Ֆրեկեան

Յակոբ Զօպանեան

Գ. Գրիգորեան

Խ. Խ. Տ. Ներսէսեան

Մ. Գ. Միսեհիսեան

Գաբրիէլ Եազրեան

Ս. Մ. Պեղիվանեան

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը տեսնէք, այն կրկին գրութիւններն բաւական ժամանակ առաջ մատուցուած են, Կրօնական ժողովոյ հրաժարագիրն ապրիլ 3, իսկ Գաղաքականինը մայիս 8 ամսաթուով, եւ Ամեն

նապատիւ Սրբազան Պատրիարքն ժամանակին յղած է զանոնք Ազգ. ժողովոյ : Սակայն արդէն ծանօթ պատճառաւ նոր կը ներկայանան ժողովին նկատողութեան :

Արդէն ընտրութեան խնդիրն վերջացած է վարչական կազմակերպութեան հին դրութիւնը փոխուելով, նոր օրէնք մը քուէարկուած եւ Սրբազան Պատրիարք Տօր յանձնուած է վարչական ընտրութիւնը կատարել Ուստի ժողովն ընտրութեանց մասին որ եւ է դործողութիւն մը չունի այժմ ընելիք. իսկ վարչութեան կրկին ժողովոյ կը մնայ մինչ ցնոր ընտրութիւն շարունակել իրենց պաշտօնն, ըստ վաղեմի սովորութեան :

ԷՔՍԷԻՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Սոյն հրաժարագրերուն հետ համարատուութեան տեղեկագիրն ալ մատուցուած է արդեօք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ոչ :

ԷՔՍԷԻՐՃԵԱՆ Մ. ԷՖ. — Պէտք է ուրեմն որ ներկայանայ :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Խօսք ուղեցի կանոնական դիտողութեան մը համար : Ատենական դործողութիւնը կրնան երբեմն շատ երկար տեւել, եւ ժողովին աշխատութեան ժամանակին մեծագոյն մասը զբաւել, Կանոնն այս կէտը նախատեսած եւ մէկ ժամ միջոց սահմանած է ատենական դործողութեանց համար : Եթէ լրացաւ որոշեալ ժամանակն, պէտք է օրակարգն անցնիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տակաւին քիչ մը ժամանակ ունինք, եւ արդէն ատենական դործողութիւնը աւարտելու մօտ են. ուստի կը շարունակենք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ միայն անցեալ սահմանադրական տարւոյ, այլ եւ 78-79 թրականին Սպիտակ տետրն ալ չերեւցաւ դեռ : Եթէ մենք չենք ուղեր եւ կը լռենք, մտածելով որ մի գուցէ մէկուն անձնականին դը

պած ըլլանք, սակայն կանոնը չլուր եւ այս մասին Դիւանին վրայ պարտաւորութիւն դրած է: Տեսէք ինչ կը տրամադրէ կանոնագրին 77րդ յօդուածն իւր վերջին սլաքերով թեմա:

« Եթէ ժամանակին չ'աւանդուին այդ համարատուութիւնը Մայր դիւանին վրայ, հանդերձ ազգային ելուստից տարեկան պիւճէով, պատասխանատու կը մնան Վարչութեան անդամք եւ գլխավորապէս գործադիր իշխանութեան Պետը, որում այս մասին հարցում կ'ուղղուի Դիւանէն: (3օդ. 1.)

Կանոնին այս տրամադրութեան համեմատ Դիւանին վրայ կը մնայ պատասխանատուութիւնն, ուստի Դիւանին թողով որ պէտք եղած հարցումն ընէ, կառավարկեմ գոցել խնդիրն:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՈ. — Շատ իրաւացի է Էքսէրճեան էֆէնտիի զիտողութիւնն, միայն թէ պէտք է գիտնալ որ Ազգ. Ժողովն 1879 թուականին Ազգ. Վարչութեան համարատուութեան ձեւը բարեփոխած եւ որոշած է որ պաշտօնական գրութեանց մէկ հաւաքածոյն ներկայանայ Սպիտակ տետրով մը: Ըսել է Վարչութեան երկու ժողովներն Սրբազան Պատրիարք Հօր հետ բանակցելով ներկայանալի գրերն պիտի որոշեն, եւ Սպիտակ տետր պատրաստեն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը յիշեմ որ ժամանակաւ Ստեփան փաշան այդպիսի առաջարկ մ'ըրաւ, սակայն չեմ յիշեր թէ Ժողովն ընդունե՞ց զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո. Ժողովն այդ առաջարկն ընդունած եւ համարատուութեան ձեւը փոխած է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Շատ աղէկ է թէ Ժողովն քուէարկեց այդ առաջարկն, չընէարկեց սակայն որ զայն անգործադրելի թողուն: Տարեգլխին պէտք էր պատրաստ ըլլար Սպիտակ տետրն, ո՞ր է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը պատրաստ է

ըստ կանոնի պէտք եղած հարցումն ուղղել այս մասին որում որ անկ է, եւ պատասխանն ստանալով՝ կը հաղորդէ Ժողովիդ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Սպիտակ տետրի մը խօսք եղաւ, կուզեմ ես ալ երկու խօսք գրուցել այս մասին: Եթէ Սպիտակ տետր ըսելով պիտի հասկնանք թէ առաջ Ազգ. վարչութիւնն իւր համարատուութիւնն Դեղին տետրով մը կը մատուցանէր եւ Ազգ. Ժողովն անոր գոյնը փոխելով Սպիտակի վերածեց, այս փոփոխութիւնն ոչինչ չէր արժէր, եւ Ժողովըն անօգուտ բան մ'ըրած կը լինէր: Սակայն Ազգ. Ժողովն այդ տնօրէնութեամբ Վարչական համարատուութեան հին ձեւին մէջ մեծ բարեփոխում մը մտցուց, բարեփոխում, որում նպատակն էր համարատուութիւնն իրացնել, եւ կանոնաւորել: Այս առաջարկն ես ներկայեցի այն ատեն Ժողովին եւ բացատրեմ թէ ինչ տեսութեամբ:

Մեր ազգային Սահմանադրութիւնը կը տրամադրէր որ Ազգ. Ժողովն երկու տարին մի անգամ ապրիլ ամսոյ վերջերը գումարուելով Վարչութեան երկամեայ պաշտօնավարութեան ընթացքին համարատուութիւնն ընէ: Այս տրամադրութեամբ պիտի թողէինք որ Վարչութիւնն երկու տարի գործէ, եւ պաշտօնէ քաշուելէն յետոյ համար տայ:

Սակայն ազգային գործերն հետզհետէ բազմապատկուեցան եւ կարեւորութիւն ըստացան, այնքան որ երկամեայ նիստերն անբաւական սկսան դառնալ այլ եւս, հանրական գործոց տնօրէնութեան համար: Արդէն Սահմանադրութեան այս տրամադրութիւնը բարեփոխելու պէտքն վաղ ուրեմն զգալի եղած եւ Ժողովն սկսած էր գումարուել ամեն անգամ որ հարկ կըլլար, եւ վերջապէս ներքին կանոնագիրն եկաւ այդ ընթացքը կանոնաւորեց եւ տրամադրեց որ Ազգ. Ժողովն փոխանակ երկտարեկան նիստերով՝ ամեն 15 օրն անգամ մը կանոնաւորապէս գումարուել: Այն ատեն Վարչական երկամեայ համարատուութիւնըն ալ՝ զոր կանոնագիրն տարեկանի կը վերածէր, իւր կարեւորութիւնը կորոյս գլխովին: Վասն զի դարձեալ նոյն կանոնագրին տրա-

մադրութեամբ եւ երեսփոխանական պաշտօնին յատուկ իրաւամբ ամեն երեսփոխան կրնար ամեն օր Վարչական խնդրոց եւ գործոց վրայ հարցում եւ հարցապնդում ընել, Վարչութեան ամեն արարքն ու տնօրէնութիւնն քննադատել, ուստի հարկ չէր մնար այլ եւս սպասել որ Սահմանադրական տարեշրջանն բոլորի եւ Վարչութիւնն իւր համարը ներկայացնէ, զի ամեն ժամ Վարչութիւնն կրնար ի համարատուութիւն կոչուիլ:

Երբ այսպէս Ազգ. Ժողովն խորհրդարանի կերպարան մ'առաւ՝ հարկ էր նաեւ մեր համարատուութեան հնաձեւ եղանակը բարեփոխել, եւ լաւագոյն օրինակաց հետեւիլ, ուստի առաջարկեցի որ փոխանակ համարատուութեան տարեկան տեղեկագրի, որում օրինակն չկար սահմանադրական եւ խորհրդարանական վարչային կազմութիւնն ունեցող Եւրոպական ազանց մէջ, Ազգ. վարչութիւնն հաւաքածոյ տետր մը հրատարակէ կարեւոր խնդրոց վերաբերեալ պաշտօնական գրութեանց, որոց հրատարակումն վնասաբեր չէ, ինչպէս կընեն, զոր օրինակ, Անդղոյ մէջ օր մը յունական. օր մը հայկական, եւ ուրիշ օր մ'ալ ուրիշ խնդրոց վրայ մէն մի տետր հրատարակելով, զոր կապույտ տետր կանուանեն:

Անշուշտ մեր տետրն անգոյն չէր կրնար ըլլալ. եւ ըստ որում ամենէն չէզոք գոյնն ըսպիտակն էր, զայն ընտրեցինք եւ կսպասէինք որ մերթ ընդ մերթ, օր մը բարենորոգմանց խնդրոյն, ուրիշ օր մ'ուրիշ կարեւոր խնդրոց մը վրայ մէն մի Սպիտակ տետր իւրոյս ելնեն:

Ահաւասիկ այս էր Սպիտակ տետրին նշանակութիւնն, եւ ամօթ է մեզ այլ եւս հնդեռասանօրեայ նիստեր ունենալ, եւ երկու կամ մէկ տարի յետոյ ելնել Վարչութեան ըսել թէ ի՞նչ գործեցիր, եկուր համար տուր մեզ:

Ուստի, կաղաչեմ, մի սպասէք այլ եւս համարատուութեան, այլ պարզապէս ըսէք Վարչութեան թէ Սպիտակ տետր մը ներկայացուր այս ինչ կամ այն ինչ խնդրոյն վրայ, եւ քաշուէ՛ ապարէղէն: Հարկ չէ վերջապէս հին ընթացքին հետեւիլ. եւ ամիսոսալ թէ Վարչութիւնն համար չտուած կը մեկնի:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Երկու անգամ, թէ Պոյաճեան էֆէնտիի եւ թէ Վարչութեան հրաժարականին առթիւ համարատուութեան խնդիր մը յուղեցաւ, եւ պատասխանատուութեան սկզբունքին վրայ խել մը խօսքեր եղան:

Կը ճանչնանք մենք այդ սկզբունքն եւ գիտենք մանաւանդ որ բարոյական պատասխանատուութիւնն մեծ է աւելի քան զնիւթականն: Բայց կարծեմ թէ երբ մայիս ամսոյ մէջ մատուցեալ հրաժարականներ դեռ այսօր նկատողութեան կառնուք, այլ եւս աւելորդ են անսպարուքներն որ կը ցուցնեմք համարատուութեան մասին:

Պահ մ'առաջ ինձ համար ակնարկութիւն մ'եղաւ թէ պատասխանատուութեան պարտաւորութիւնը բառնալ առաջարկած եմ: Երբ Վարչական կազմակերպութեան օրինաց ծրագիրը կը քննուէր, եւ երբ կարգը պատասխանատուութեան կէտին եկաւ, Սահմանադրութեան տարբեր կերպով տրամադրուած գտայ այս կէտն ծրագրին մէջ, ուստի առաջարկեցի թեթեւցնել զայն, իսկ երբ տեղեկագրեր էֆէնտիին հաւաստեց թէ Սահմանադրութեան համաձայն էր, լռեցի:

Ես իմ մասին ամեն ազգային պաշտօնի համար որ յանձն առնում կատարել, զիս պատասխանատու կը նկատեմ ըստ ամենայնի, բայց շատերուն քով արժէք չունի այդ բառն եւ նոյն իսկ զայն կը յարգենք ըսողները շատ երեւելի անձեր փափուկ գործերու մէջ ամբաստանած են հոս այս Ժողովին առջեւ անվայել կերպով եւ Ժողովը պարտաւորած են դատական Յանձնախումբեր դնելու, սակայն արդիւնք մը չէ ունեցած եւ տեղեկագիր մը անգամ չէ եկած Ժողովին: Զեմ ուղեր այդ անձերն յանուանէ յիշել. զի ամենքդ ալ կը ճանչնաք:

Ես այդ պատճառներով առաջարկեցի որ գէթ թեթեւայ այդ պատասխանատուութեան կէտն:

Իսկ Վարչութեան համարատուութեան դալով՝ քանի որ անոր հինգ ամսուան հրաժարականն դեռ նոր նկատողութեան կառնուք, պէտք է քիչ մ'ալ մենք սպասենք որ Սպիտակ տետր ներկայէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչ որ Շահապ-
էֆէնտին ըսաւ իմ փաստերուն նպատա-
ւոր է. այո՛, շատ ճիշդ է որ ամբաստանու-
թիւններ տեղի կունենան, զանոնք քննելու
համար դատական Գանձնախումբեր կը դրուին,
բայց ոչ քննութիւն կըլլայ, եւ ոչ ինչ: Ես
այս վիճակին պատճառն կուզէի հասկնալ, եւ
երբ անցեալ օր Շահապէֆէնտին կըսէր թէ
մեր մէջ պաշտօններն ի փոքս Աստուծոյ եւ
ազգին կը կատարուին, ուստի պաշտօնատա-
րաց պատասխանատուութիւնը թեթեւցնել,
կամ բաժնաւ պէտք է, այն ատեն ըմբռնեցի
որ այս գաղտնիարաց ազդեցութենէն կը հետե-
ւէր այս վիճակն: Այս մասին այսքան է պա-
տասխանս:

Երկու խօսք ալ Սպիտակ տետրին վրայ:
Վարչութիւնն ոչ թէ Սպիտակ տետր պիտի
հրատարակէ երբ արժան դատի, այլ պարտա-
ւոր է տարւոյն վերջը մասնաւորապէս կա-
րեւոր խնդրոց վրայ եղած այն թղթակցու-
թիւններն, որոյ հրատարակումն մնասաբեր
չէ, իւրյս հանել: Գլխաւոր թողովն, այլ եւ
ազգն պէտք է տեղեկութիւն ստանայ իւր
գործերուն վրայ. ուստի Վարչութեան բա-
ցարձակ կամքէն կախեալ չէ այս պարագային
մէջ շարժիլ ինչպէս որ ուզէ: Զեմ կարծեր
որ այս Սպիտակ տետրին պատրաստութիւնն
ալ երկար ժամանակի կարօտ աշխատութիւն
մը լինի, զի դեռ կը յիշենք որ անգամ մ'ուր
օրուան մէջ գաւառական հարստահարու-
թեանց մէկ ընդարձակ քաղաքացի պատրաս-
տեցաւ, Սակայն ինչ ըսելու է կեղծ. ստուկի
հաշուեցոյցին եւ ելմտացոյցին համար, որ
նոյնպէս դեռ չեկան ժողովին: Զգիտենք թէ
Վարչութիւնն ելմտական գործառնութեանց
մէջ քուէարկեալ ելմտացոյցին համեմատ վար-
ուեցա՞ւ թէ ոչ:

Իմ կարծիքս այն է վերջապէս որ Մայր
գիւղանն ըստ ներքին կանոնադրի պէտք է այս
յետաձգմանց համար հարցում մ'ուղղէ Վար-
չութեան եւ պատասխանն ստանալով հաղորդէ
Ժողովին, ինչպէս որ կը տրամադրէ մեր ներ-
քին կանոնադրը:

Գ.ՓԱՄԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ կընդու-

նիմ Ստեփան փաշայի ըրած գիտողութիւննե-
րն, համարատուութեան Սպիտակ տետրին
նկատմամբ, եւ օգուտ քաղելով անոր առա-
ջարկէն, կառավարկեմ եւ ես օր ամէն բանէ
առաջ Սպիտակ տետրի նիւթ լինին եւ հրա-
տարակուին Տիգրանակերտի երկու պատուի-
րակաց՝ Սրուանձտեանց Տ. Գարեգին վարդա-
պետի եւ Պոյաճեան էֆէնտիի գրերն, վասն
զի այս խնդիրն կարեւորութիւն ունի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչիւրը չչիտթենք, այդ
տեսակ տեղեկութիւններ համարատուութեան
պահուն պէտք է պահանջուին: Իսկ Սպի-
տակ տետրն ըստ որում ուշացած է, Գի-
ւանն այս յապաղման համար ըստ կանո-
նի հարցում պիտի ուղղէ եւ պատասխա-
նը հաղորդէ Ժողովիդ: Ուստի այլ եւս հարկ
չկայ այս վիճաբանութիւնը շարունակել: Կը
մնայ այժմ Վարչութեան հրաժարականի
խնդիրն, եւ զայն քուէի պիտի դնեմ:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին Վար-
չութեան կրօնական եւ Բաղաքական ժողովոց
հրաժարականները քուէի կը դնէ եւ Ժողովը
միաձայն կ'ընդունի զանոնք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկ կը համարիմ յայ-
տարարել որ Վարչութեան հրաժարականն թէ
եւ ընդունուած, բայց պարտաւոր է ցնոր ընտ-
րութիւն շարունակել իւր պաշտօնն:

ԶԱՅՆԵՐ. — Այո՛. այո՛:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Անկարելի է
շարունակել. արձանագրեցէք այս կէտն:

4.

Երեսփոխան Ս. Փափագեան Էֆէնտիի առա-
ջարկն Ալաշկերտի սովետոց մասին:

Երեսփոխան Ս. Փափագեան էֆէնտիի կող-

մէ մատուցեալ յետագայ առաջարկն կարդա-
ուեցաւ:

Լրագրաց մէջ կարդացինք թէ Ռու-
սաբնակ Ազգայնոց կողմէն ի նպաստ Հայ
սովետոց Ալաշկերտի Ժողովուած հանգա-
նակութենէն 17,000 ռուբլի փոխանակ
այն սովետոց անմիջական պիտոյից յատկա-
նալու, Վեհ. Հայրապետին հրամանա-
ւորութիւնով երաժուեր է այդ գումարն
եւ անոր տոկոսը Ալաշկերտի Հայ մանկանց
կրթութեանը յատկացեր է:

Միւս կողմէն կը կարդանք թէ տա-
կաւին սովը կը շարունակէ ի Հայաստան,
եւ Սովետոց յանձնախմբին վերջին հրատա-
րակութեանց ցանկին մէջ կը գտնուի նա-
եւ Ալաշկերտ:

Արդ՝ կերելի թէ Վեհ. Հայրապետը
տեղեկութիւն չունենալով որ տակաւին
կը տիրէ սովը յ'Ալաշկերտ, այդ անօրէ-
նութիւնն ըրած է. եւ որովհետեւ սոքն
ազգային գոյութեան դէմ կ'սպառնայ,
եւ իբր այն՝ աւելի ստիպողական է քան
ղկրթութիւն, որ կուգայ յետ սովու իբ-
րեւ ստիպողական քան զայլ ամենայն պի-
տոյս, ուստի կ'առաջարկեմ որ Ազգ. Ժո-
ղովն յանձնարարէ Վարչութեան, գիմել
առ Վեհ. Հայրապետն, եւ խնդրել այդ
գումարին անմիջական գործածութիւնը
յօգուտ սովեալ եղբարց մերոց Ալաշ-
կերտի:

Ազգ. Երեսփոխան

Ս. Պ. Պ. Փափագեան

19 Սեպտ. 1880

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն առաջարկին վը-
րայ գիտողութիւն ունեցող կայ:

ԲԱԶՄԱԹԻԻ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ. — Կը ձայ-
նակցինք:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Եթէ ոտուգիւ
ի նպաստ Ալաշկերտի սովետոց հանգանակուած
է այդ գումարն, պէտք է զայն իւր նպատակին
գործածել անմիջապէս, եւ Փափագեան էֆէնտի
առաջարկն յղել Վարչութեան ի գործադրու-
թիւն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչ որ գրած եմ,
արդէն էջմիածնայ Արարատ ամսագիրն հրա-
տարակած է:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի
կը դնէ Փափագեան էֆէնտիի առաջարկն եւ
Ժողովը միաձայն ընդունելով զայն, Ազգային
վարչութեան կ'ընտրուի ի գործադրութիւն:

5.

Երեսփոխան Ս. Փափագեան Էֆէնտիի երկ-
րորդ առաջարկն Վեհ. կարողիկոսի
նկատմամբ:

Երեսփոխան Ս. Փափագեան էֆէնտիի կող-
մէ մատուցեալ յետագայ առաջարկը կարդա-
ուեցաւ:

Ազգ. Ժողովս իբրեւ ներկայացուցիչ
Թուրքիաբնակ Հայոց մասնակցած է ընտ-
րութեան վեհափառ Հայրապետին ամե-
նայն Հայոց, տալով իրաւունքս իւր երկու
պատգամաւորաց որ յընտրութեան անդ-
ի Ս. Էջմիածին, 130 քուէ ունենան ըստ
կրկին թուոյ առաջնորդական վիճակաց
Թուրքիաբնակ Հայոց, ինչպէս որ եղաւ
իսկ, եւ քուէից սոյն մեծամասնութեան

ղօրութեամբն Ազգ. Ժողովոյս ընտրելին՝ որ էր Տ. Գէորգ Սրբազան առաջնորդ Պրուսայու, ընտրեցաւ կաթողիկոս Ամենայն Հայոց :

Արդ՝ Ամենայն. Հայոյ Վեհ. Հայրապետն 14 տարիէ ի վեր կը վարէ իւր հովուական պաշտօնն, և ցարդ Ն. Վեհափառութեան հանրական գործոց վրայ, որ և է պաշտօնական տեղեկութիւն մը ստացած չէ Ազգ. Ժողովս : Կը կարդանք երբեմն Ազգ. Թերթերու մէջ գովեստներ Ն. Վեհափառութեան ազգօգուտ գործոց նկատմամբ, երբեմն ալ պարսաւներ որք կը խոցեն համայն Հայոց սիրտը : Իրաց ներկայ վիճակին մէջ ինչ կը թուի թէ ժամանակն է ՚ի դիմաց Ազգային Ժողովոյս յղել առ Նորին Վեհափառութիւն երկու պատգամաւոր, մին եկեղեցական և միւսն աշխարհական, որք լիազօր պաշտօն ունենան,

Ա. Մանրամասն տեղեկութիւն ըստանալ Նորին Վեհափառութենէն իւր հանրական գործոց և ընթացից վրայօք :

Բ. Թուրքիաբնակ Հայոց այժմեան ու Ազգային Ժողովոյ բաղձանքները ներկայել Նորին Վեհափառութեան :

Սոյն առաջարկս կը ներկայեմ Ազգ. Ժողովոյ քննութեան և որոշմանը :

Ազգ. Երեսփոխան

Ս. Պ. Պ. Փափազեան

19. Սեպտ. 1880

(Յետ ընթերցման)

Սոյն առաջարկն յետ վիճարանութեան, Իրաւասութեան եւ Զեռնհասութեան միացեալ գիւտնաց յղուեցաւ ի նախաքննութիւն Վիճարանութիւնը դռնփակ նիստով :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

1. Ուղերձ ի պատասխանի Նախագահական դրոյն. — Ծրագիր Ատենապետաց գիւտնի : (Դռնփակ) :

Ատենադպիր

Ատենապետ

Մ. Յ. ՄԷԼԻԲԵԱՆ

Տ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ



ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Բացակայութիւն Երեսփոխանաց
2. Հրաժարական Երեսփոխանաց ոմանց :
3. Հրաժարագիր Ա. Ղ. Վարչութեան կրկին ժողովոց :
4. Երեսփոխան Ս. Փափաղեան էֆէնտի առաջարկն Ալաշկերտի սովետոց մասին :
5. Երեսփոխան Ս. Փափաղեան էֆէնտի առաջարկն Վահ. Կաթողիկոսի նկատմամբ :

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ուղերձ ի պատասխանի Նախագահական գրոյն . — Ծրագիր Ատենապետաց զիւանի : (Դռնփակ)

Գին 2 դրոշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Ա. ԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԱԿԱՆՈՒՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի եւ Դալարիոյ Ս. Լուսաւորիչ
եկեղեցւոյ բանկայը եւ Հայ գրավաճառաց քով